600.0171.17.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2017 թվականի №171Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2008 թվականի սեպտեմբերի 3-ի №475Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Արմինե Պետրոսյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0432 թույլտվության (այսուհետ՝ թույլտվություն) պայմանների 3-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված է «Արմա» ազդականչը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի №03/11.1/1960-17 գրության համաձայն՝ իրականացված ռադիոեթերի մոնիթորինգի և չափումների արդյունքում հայտնաբերվել է, որ անհատ ձեռնարկատիրոջը պատկանող ռադիոցանցն աշխատել է իրեն չհատկացված ազդականչով,

գ) հանձնաժողովը 2017 թվականի փետրվարի 17-ի №ԱԲ-376Հ գրությամբ անհատ ձեռնարկատիրոջից պահանջել է պարզաբանումներ ներկայացնել հանձնաժողովին իր կողմից թույլտվության պայմանների խախտմամբ շարժական ռադիոկապի ցանցի շահագործման վերաբերյալ, սակայն վերջինս հանձնաժողովին որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ վերջինիս կողմից թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին անհատ ձեռնարկատերը ծանուցվել է հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի №ԱԲ-666Հ գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում անհատ ձեռնարկատերը 2017 թվականի ապրիլի 12-ին դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ իր կողմից շարժական ռադիոկապի ցանցը շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով,

զ) հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 21-ին փոխօգնության կարգով դիմել է նախարարություն՝ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայումս շարժական ռադիոկապի ցանցը շահագործվող ազդականչի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, միաժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի և 2-րդ մասի հիմքերով երեսնօրյա ժամկետով երկարաձգելով անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

է) նախարարության 2017 թվականի մայիսի 10-ի №03/11/7592-17 գրության համաձայն՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ անհատ ձեռնարկատիրոջ շարժական ռադիոկապի ցանցը ներկայումս շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 22-ից անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
17 մայիսի 2017թ.